

ԱՅՆԱ ԱՄԻՐՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ԻՆՏԵՐԱԿԱՏԻՎ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՍԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԱՌԱՎԵԼ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՑՈՒՐԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ**

Հոդվածում քննության է առնվում ԵՊՀ Ժուռնալիստիայի ֆակուլտետում ինտերակտիվ դասերի կազմակերպումը: Այսիսի դասընթացներն առավել արդյունավետ են մասնագիտական նյութն անձներեն լեզվով յորացնելու համար: Ժուռնալիստիկայի ֆակուլտետում նման դասընթացներ կարելի է իրականացնել անձներեն լեզվով հարցազրույցներ կազմակերպելու միջոցով: Ինտերակտիվ դասերի ժամանակ ուսանողները, ստանձնելով հարցազրույց վարողի և զրուցիչիների (ամենատարբեր ոլորտներից) դերեր, ընդլայնում են մասնագիտական և ընդհանուր քառապաշարը, հմտանում են անձներեն լեզվով անկաշկանդ հաղորդակցվելու, հարցազրույցներ վարելու մեջ: Նման դասերի կազմակերպումը հնարավորություն է տալիս դասախոսին արդյունավետ դարձնել կրթական գործնթացը՝ ուղղորդելով ապագա լրագրողներին ինքնուրույն աշխատանքի և ստեղծարարության:

Բանափառ. Ինտերակտիվ իրազեկություն, հարցազրույց, ապագա լրագրող, լեզվական միջավայր, ճանաչողական հմտություններ, լրագրողական էրիկա, օտարերկրյա լրագրող

Ժամանակակից աշխարհում գրեթե ցանկացած մասնագիտություն ենթադրում է հաղորդակցման հնարավորություն ոչ միայն մայրենի, այլ նաև որևէ օտար՝ մասնավորապես անձներեն լեզվով: Այժմ գրեթե անհնար է պատկերացնել մի ոլորտ, որտեղ օտար լեզվի իմացության կարևորությունն ակներև չլինի:

Տիրապետել օտար լեզուների, նշանակում է ունենալ հնարավորություն ազատ առնչվելու այլ մշակութային արժեքների, այլ կենսակերպի հետ: Այն օգնում է այլ կերպ ընկալել շրջապատող միջավայրը, ինչպես նաև՝ ինքներս մեզ, նպաստում է շվիման շրջանակների ընդլայնմանը:

Ամրող աշխարհում համացանցի ընդլայնման հետ մեկտեղ հնարավորությունն են ստեղծվում օգտվելու համացանցի հանրագիտարաններից, ամենատարբեր մասնագիտական նյութերից:

Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում, որոնք բնութագրվում են միջազգային կապերի ակտիվացմամբ և մասնագիտական համագործակցության կարևորությամբ, բարձրագույն կրթությանը նոր պահանջներ են առաջադրվում: Օտար լեզվի գրագետ տիրապետումը դիտվում է որպես ուսանողի մասնագիտական վերապատրաստման անբաժան բաղադրիչ: Այս առումով արդիական է դասնում անհրաժեշտությունը ոչ լեզվական ֆակուլտետներում ձևավորելու և զարգացնելու ուսանողների միջմշակութային

հաղորդակցության ունակությունները և պատրաստ լինելու օտար լեզուն որպես պարզապես դասավանդվող առարկայի ուսուցումից անցնելու այն մասնագիտական նպատակներով գործնականում կիրառելու հմտության:

Ոչ լեզվական ֆակուլտետներում օտար լեզվի ուսուցման խնդիրներին վերաբերող ժամանակակից ուսումնասիրություններում մասնագիտական իրազեկությունը դիտարկվում է որպես քարդ համակարգ, որն իր մեջ ներառում է ճանաչողական, լեզվաբանական և ինտերակտիվ բաղադրիչներ: Նոր քափ հավաքող գլոբալիզացիայի և առանց քարզմանչի օգնության արագ և հմտորեն մասնագիտական խնդիրները լուծել կարողացող մասնագետների մեծ պահանջարկին ու ինտերակտիվ իրազեկությանը տրվում է առաջատար դեր:

Բուհերում օտար լեզվի դասավանդման մեթոդները բազմազան են՝ կախված տվյալ ֆակուլտետում ամրագրված դասավանդման ծրագրից, ուսանողների գիտելիքների բազայից, և, իհարկե, դասախոսի անհատական մոտեցումից: Այս առումով, բարձրագույն ուսումնական հաստատություններում ինտերակտիվ դասերի կազմակերպումն օտար լեզվի ուսուցման ընթացքում կարող է լինել շատ արդյունավետ՝ կազմելով օտար լեզվի ուսուցման ամենակարևոր և ամենախոստումնալից բաժիններից մեկը:

Առաջին խնդիրը օտարանեզու խոսքի տիրապետման ուսուցման հարցում հանդիսանում է անձի համար նպաստավոր պայմանների ստեղծում, որում խոսքը կարևոր դեր է խաղում:

Հումանիտար ֆակուլտետներում սովորող ուսանողների համար նման դասերին մասնակից դարձնելը օտար լեզվի ուսուցման չափազանց կարևոր մեթոդ է: Օտար լեզվի ուսուցման ընթացքում ինտերակտիվ դասերին ելույթ ունենալը ստիպում է ուսանողին ճիշտ հասկանալ իր ստեղծագործական պոտենցիալը, արդեն իսկ բուհում ուսանելու ժամանակ, զարգացնել ինքնուրույն աշխատելու հմտությունը, ել ավելի ընդլայնել գիտելիքները: Նման դասերի շնորհիվ ձևավորվում է ուսանողի ինքնուրույն աշխատելու հմտությունը և, որ ամենակարևորն է՝ նրա ստացած տեսական գիտելիքները կիրավում են գործնականում:

Հիմնական շեշտադրումն արվում է ոչ թե լեզվի ուսուցման որպես պարզապես օտար լեզու, այլ հաղորդակցական նպատակներով դրա կիրառման միջոցների զարգացման վրա:

Այսպիսի դասերի արդյունքում ոչ լեզվական հումանիտար ֆակուլտետներում ուսանողները կարողանում են լուծել կարևոր գործնական, կրթական առաջարարաններ, ինչն ել նրանց մեջ հետաքրքրություն է առաջացնում օտար լեզվի հանդեպ:

Ինտերակտիվ դասընթացներին պատրաստվելը զարգացնում է ուսանողների ճանաչողական հմտությունները, իրենց գիտելիքներն ինքնուրույն ընդլայնելու և տեղեկատվական դաշտում ինքնուրույն կողմնորոշվելու հմտությունը՝ միաժամանակ զարգացնելով վերլուծական մտածողություն: Նման դասերը նպատակահարմար է անցկացնել պարբերաբար:

Լեզվի իմացության, ինչպես նաև այն մասնագիտական դաշտում կիրառելու ունակության կարևորությունը հատկապես հրամայական է ժամանակակից լրագրողի համար: Ժամանակակից լրատվական դաշտը ողողված է տեղական և արտասահմանյան նորություններով: Համացանցային լրատվամիջոցները, բազմաթիվ հեռուստաալիքներն անընդհատ մեզ հրամցնում են ամենաթարմ նորությունները: Այս լրատվական հոսքին հետևելու ու աշխարհի անցուղարձից տեղյակ լինելը լրագրողի համար անհրաժեշտություն է: ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում անգլերենի դասավանդման ծրագրը կազմված է հաշվի առնելով բոլոր ժամանակակից պահանջները, որոնք անհրաժեշտ են ապագա լրագրողի համար՝

1. Զարգացնել հաղորդակցման հմտություններն օտար լեզվով,
2. Տիրապետել մասնագիտական բառապաշտի և կիրառել այն,
3. Կարողանալ օգտվել տեղեկատվական աղբյուրներից /գիտական գրականություն, պարբերականներ, համացանց/,
4. Տիրապետել քաղաքական բառապաշտին և կիրառել այն,
5. Ընթունել բարգմաննել և մեկնաբանել մասնագիտական նյութը օտար լեզվից մայրենի լեզվով և հակառակը,
6. Հարցագրույց վարել օտար լեզվով,
7. Ունենալ բավարար լեզվական բազա օտար երկրում որպես օտարերկրյա լրագրող աշխատելու:

Ֆակուլտետում անգլերեն լեզուն դասավանդվում է մասնագիտական դասագրքերով, ուսանողները մշտապես աշխատում են արտասահմանյան ամենաթարմ լրատվական նյութերով, համակարգչով ունկնդրում, ապա քննարկում և մեկնաբանում են բնագիր մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստեր, երկխոսություններ, պարբերաբար ունենում են հանդիպումներ օտարերկրյա արվեստագետների, լրագրողների հետ, անգլերեն լեզվով կազմակերպվում են գիտաժողովներ: Այս ամենն, անշուշտ, զարգացնում է ուսանողների օտար լեզվի իմացությունն ու անհրաժեշտ հմտությունները, հնարավորություն է տալիս ճիշտ և անկաշկանդ հաղորդակցվել օտար լեզվով: Շնորհիվ այս դասերի ուսանողը հնարավորություն է ունենում անգլերեն լեզվով յուրացնելու մասնագիտության գրեթե բոլոր ճյուղերը /հետաքննական լրագրություն, հարցագրույց, լրագրողական էթիկա և այլն/:

Կարևորում ենք նաև ինտերակտիվ դասընթացների կազմակերպումը մասնագիտական ուղղվածությամբ, որոնց շնորհիվ ապագա լրագրողներն ել ավելի ազատ ու անկաշկանդ կկարողանան տիրապետել լեզվին, շփվել, մասնավորապես անզիւզու արվեստագետների, քաղաքական գործիչների, լրագրողների հետ, օգտվել համաշխարհային ճանաչում ու համբավ ունեցող լրատվամիջոցներից:

Հայտնի է, որ գրագետ հարցագրույց վարելը, թերևս, կարևորագույն մասնագիտական հմտություններից է համարվում գրեթե բոլոր լրագրողների համար: Հարցագրույցն ինքնին ներկայանում է լեզվական առումով յուրահատուկ ուսումնասիրության առարկա՝ մի կողմից, դրանում առկա են առօր-

յայում երկխոսության շիման տարրեր, մյուս կողմից՝ հարցագրույցի սահմաններում հաղորդակցությունը ենթարկվում է խիստ կանոնների: Այսպիսվ՝ հարցագրույց վարողի և գրուցակցի փոխազդեցության յուրահատկությունների ուսումնասիրությունն ու կիրառումը օտար լեզվով նույնպես շատ կարևոր է:

Անգլերենի դասերին ուսանողներն ունեն հնարավորություն մասնագիտական դասագրքերով մանրամասն սովորել թե մասնագիտական բառապաշարը, որն անհրաժեշտ է անգլերենով հարցագրույցներ անցկացնելիս, թե՝ մասնագիտական էթիկայի կանոնները, որոնց պետք է հետևել, եթե նրանք հարցագրույց են վարում տարրեր բնագավառների ներկայացուցիչների հետ և տարրեր պայմաններում:

Մասնագիտական նյութն ինչպես հարկն է ուսումնասիրելուց և յուրացնելուց հետո ուսանողներին տրվում են հետևյալ հանձնարարությունները, որոնց միջոցով էլ իրականացվում են ինտերակտիվ դասերը.

1. Խումբը բաժանվում է գույգերի,
 2. Ամեն գույգից մի ուսանողին տրվում է հարցագրույց վարողի, մյուսին՝ գրուցակցի դեր,
 3. Զույգերից յուրաքանչյուրում գրուցակցի դեր ստանձնածին տրվում է որևէ քաղաքական գործչի /Հայաստանի կամ ցանկացած այլ երկրի/, արվեստագետի, կամ այլ բնագավառի ներկայացուցչի անուն, որին պիտի մարմնավորի տվյալ գրուցակիցը,
 4. Համապատասխանաբար, ամեն մի հարցագրույց վարողի հանձնարարվում է նախապես մանրամասն տեղեկանալ ամենատարբեր անգլալեզու աղբյուրներից /ամսագրեր, թերթեր, գրքեր, համացանց/ այն գրուցակցի մասին, որից պետք է հարցագրույց վերցնի,
 5. Զուգահեռաբար, գրուցակիցը պետք է ամենատարբեր աղբյուրներից /ամսագրեր, թերթեր, գրքեր, համացանց/ անգլերեն լեզվով մանրամասն տեղեկանալ այն անձի նախապես, ում մարմնավորելու է:
 6. Ուսանողներին նաև հանձնարարվում է համացանցում գտնել և դիտել տեսագրություններ այն հայտնի անձանց հարցագրույցների, որոնց մարմնավորելու են, ինչն էլ իր հերթին նպաստում է նրանց անգլերեն լեզվով ունկնդիրելու հմտությանը:
 7. Հարցագրույց վարողը պետք է անգլերեն լեզվով հարցեր պատրաստի տրամաբանական հաջորդականությամբ, ինչպես նաև իր մոտ ունենալ լրացնիչ (պահեստային) հարցեր:
 8. Խմբի մյուս ուսանողները հանդես են գալիս որպես ունկնդիրներ և հարցագրույցի ավարտին հնարավորություն են ունենում անգլերեն լեզվով իրենց հարցերն ուղղել գրուցակցին՝ այսպիսով ակտիվորեն ներգրավվելով դասապրոցեսին:
- Վերը նշված հանձնարարությունները օգնում են ուսանողներին դասագրքի նյութը լիովին յուրացնել, ծրագրից բացի հավելյալ նոր և մասնագիտությանը առնչվող նյութեր կարդալ և նոր բառապաշար սովորել:

Հանձնարարությունների հաջորդ փուլը գործնական է. այն է՝ հարցազրույց վարել անգերեն լեզվով: Այս հանձնարարությունը ենթադրում է բոլոր ստացած գիտելիքների գործնական կիրառում, փորձել իրենց զգալ հարցազրույց տվյալի, կամ վարողի դերում, ավելի վարժ և անկաշկանդ ձևակերպել և ուղղել հարցեր անգերեն լեզվով՝ ճշգրտորեն պահպանելով հարցազրույց վարելու էթիկայի բոլոր կանոնները:

Արդյունքում յուրաքանչյուր խմբում ձևավորվում են առնվազն ութից տասը զույգեր և նույնքան հարցազրույցներ ամենատարբեր ոլորտների ներկայացուցիչներին մարմնավորող ուսանողների հետ /արվեստի գործիչներ, քաղաքական գործիչներ, հասարակական գործիչներ և այլն/: Դասի ընթացքում բոլոր ուսանողները լսում են նախապես պատրաստած հարցազրույցները: Քանի որ հարցազրույցների համար մտացածին հյուրերն ընտրվում են տարբեր բնագավառներից, ուստի ուսանողները հնարավորություն են ունենում ել ավելի ընդլայնել իրենց բառապաշտարը ամենատարբեր ոլորտներում: Խմբի մյուս ուսանողները հանդես են զալիս որպես հարցազրույցի ունկնդիրներ և դրա ավարտին իրենց հարցերն են ուղղում զրուցակցին՝ այսպիսով նույնպես ակտիվորեն ներգրավվելով դասապրոցեսին: Դասի վերջին հատվածում խմբի բոլոր ուսանողները գրի են առնում հարցազրույցներում օգտագործված նոր բառերն ու արտահայտությունները, այսպիսով ել ավելի ընդլայնում իրենց բառապաշտարը: Ժամանակակից անգլալեզու հարցազրույցներում մի կողմից առկա են առօրեական շփման տարբեր: Դրանք զրուցակիցների միջև անկաշկանդ, անմիջական և վստահելի մթնոլորտ են ապահովում: Մյուս կողմից ել հարցազրույցի շրջանակներում տվյալ հաղորդակցությունը ենթարկվում է խիստ կանոնների: Հետևաբար, անգերենի դասաժամերին գործնականում կիրառելով այս բոլոր հմտությունները, ուսանողները են ավելի են ընդլայնում և ամրապնդում անգերենի իրենց յուրացրած ընդհանուր բառապաշտարը և սովորում են անգերեն լեզվով վարժ տիրապետել մասնագիտական նյութին:

Հարցազրույց վարելիս ուսանողները պետք է ճիշտ կիրառեն անգլալեզու հարցազրույցներում գործող լեզվահոետորական միջոցները՝ կախված զրուցակցի գործունեության ոլորտից /քաղաքական գործիչ, արվեստագետ և այլն/: Բանավոր խոսքը կարող է փոխանցել հաղորդակցվողների հույզերն ու զգացմունքները՝ այսպիսով կենտրոնացնելով լսարանի ուշադրությունը և նպաստելով ստացված մեսիջի ավելի լավ ըմբռնմանը /Khe Foon Hew, 2014: 25/: Այսպիսով՝ ուսանողները, որպես ապագա լրագրողներ, գիտեն, որ գոյություն ունի կապ զրուցակցի մասնագիտական գործունեության և հարցազրույցի մասնակիցների խոսքի իմաստաբանական դրսւումների միջև:

Այս հանձնարարությունների շարքը չափազանց ոգևորում է ուսանողներին, դեռ ավելին՝ դրդում է ակտիվ մասնակցելու ողջ դասապրոցեսին: Ըստ Լյուիսովիլցու, օտար լեզվի դասավանդման հիմնական գործիք է համարվում լեզվական միջավայրը (language environment), իսկ բոլոր մնացած գործիքները համարվում են օժանդակ /Ляховицкий, 1991/: Նման

ինտերակտիվ դասերի շնորհիվ, լսարանում իսկապես ստեղծվում է մի յուրօրինակ լեզվական միջավայր, որտեղ ուսանողները անգլերեն լեզվեվ հաղորդակցվելիս դառնում են ավելի անկաշկանդ և փորձում են լավագույնս իրենց դրսնորել:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ հումանիտար ֆակուլտետներում նման ինտերակտիվ դասընթացների անցկացումը հնարավորություն է տալիս դասախոսին ավելի արդյունավետ դարձնել կրթական գործընթացը՝ նղելով ուսանողներին ինքնուրույն աշխատանքի և ստեղծարարության:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Гальскова Н.Д., Гальскова Н.Д., Гез Н.И. Теория обучения иностранным языкам: Лингводидактика и методика: учебное пособие для вузов Текст. Изд. 2-е, испр. Москва: Академия, 2005.
2. Китайгородская Г.А. Реформы в обществе реформы в системе образования. 33 ответа на 33 вопроса. Москва: Дрофа, 1993.
3. Коряковцева Н.Ф. Современная методика организации самостоятельной работы изучающих иностранный язык: Пособие для учителей. Москва: Аркти, 2002.
4. Полат Е.С. Метод проектов на уроках иностранного языка // *Иностр. языки в школе*, 2000, № 2.
5. Поляков О.Г. Английский язык для специальных целей: теория и практика. учебное пособие. Москва: НВИ-ТЕЗАУРУС, 2003.
6. Ляховицкий М.В. Общая методика обучения иностранным языкам. Москва, 1991.
7. Hatch E. Discourse and language education. Cambridge: Cambridge University Press, 1992.
8. Rivers M. Interactive language teaching. Cambridge (Cambridgeshire). New York: Cambridge University Press, 1987.
9. Haley M.H., Austin T.Y. Content-based second language teaching and learning: An interactive approach. New York: Allyn & Bacon, 2004.
10. Khe Foon Hew, Wing Sum Cheung. Using blended learning: Evidence-based practices, Springer, 2014.

А. АМИРЯН – Организация интерактивных занятий как способ продуктивного усвоения профессионального материала. – В статье рассматривается организация интерактивных занятий на факультете журналистики ЕГУ. Такие занятия наиболее продуктивны для усвоения профессионального материала на английском языке. Интерактивные занятия на факультете журналистики можно осуществлять в форме интервью на английском языке. В процессе интерактивных

занятий студенты выступают в роли интервьюера и интервьюируемых из самых разных сфер, тем самым расширяя общую и профессиональную лексику, приобретая навыки свободного общения и ведения интервью на английском языке. Организация подобных занятий повышает продуктивность учебного процесса, направляя студентов на самостоятельную работу и креативный подход ко всему процессу.

Ключевые слова: интерактивная компетенция, интервью, будущий журналист, языковая среда, когнитивные навыки, журналистская этика, иностранные журналисты

A. AMIRYAN – *The Organization of Interactive Lessons as a Productive Means of Assimilation of the Professional Material.* – The paper touches upon the organization of interactive lessons at the Department of Journalism of YSU. This kind of lessons are productive for studying professional material in the English language. At the Department of Journalism interactive lessons can be carried out by conducting interviews in English. During the interactive lessons, students expand their professional and general vocabulary, become more skillful at communicating and conducting interviews in English through personification of interviewers and interviewees from different spheres. The organization of this kind of classes gives an opportunity to the teachers to make the teaching process more productive, motivating their students to work independently and to be creative.

Key words: interactive competence, interview, would-be journalist, language environment, cognitive skills, journalistic ethics, foreign correspondent